

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐՎԱՅԱՑՆԵԼՈՒ

«Ջրամատակարարման եվ ոռոգման համակարգերը սպասարկող կառույցների արդյունավետությունը և կայունությունը բարձրացնելու նպատակով ուսուցման կազմակերպում» IRFSP/TA/CQS-2019/011

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր  
Խորհրդատվական Ծառայություններ՝ *Ընտրություն խորհրդատուի որակավորման հիման վրա*

ԳԶՄՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

**Ծրագրի նկարագիր՝**

ԳՏՏԶ ԾԻԳ-ը իրականացնում է գյուղական համայնքների զարգացման ծրագրեր: Ընթացիկ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի» (ԵԳՖԱԾ) նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեչղթայի օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով:

Ծրագրի հատուկ նպատակներն ուղղված են Հայաստանի ընտրված մարզերի գյուղական տարածքներում աղքատության խնդրի լուծմանը հետևյալ ուղիներով. (i) փոքրածավալ տնտեսությունների արտադրողականության, հետարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացում և անցում բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը, (ii) գյուղմթերքներ վերամշակող կազմակերպությունների և գյուղացիական փոքր ու աղքատ տնտեսությունների միջև կապի հաստատում՝ նրանց համար հասանելի դարձնելով տեղական ու միջազգային շուկաները և ստեղծելով զբաղվածության հնարավորություններ աշտեչղթայի շրջանակում, (iii) տեղումների մակարդակի տատանումների նկատմամբ գյուղատնտեսական արտադրական համակարգերի ճկունության բարելավում և (iv) սննդի անվտանգության բարելավում՝ ապահովելով գյուղատնտեսական արտադրանքի և ընտանեկան առողջապահության որակի բարձրացում՝ տնային տնտեսությունների ջրամատակարարման բարելավման միջոցով:

Ծրագիրը ներառում է 5 հիմնական բաղադրիչ. (i) Գյուղական ֆինանսավորում, (ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ, (iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն, (iv) Ծրագրի կառավարում և (v) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում:

**Գյուղական ֆինանսավորում բաղադրիչը** վերաֆինանսավորման կապիտալ և բաժնեմասնակցային ներդրումներ է տրամադրում փոքր հողատերերին և ՓՄՁ-ներին՝ արտադրական գործունեությունը բարելավելու, ակտիվացնելու և եկամուտները բարձրացնելու նպատակով:

**Ֆերմերների իրազեկում և աջակցություն և Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչները** թիրախավորում են ֆերմերներին՝ հողերի կայուն կառավարման համակարգերում, տեխնոլոգիաներում և կարողությունների զարգացման ոլորտում ներդրումների միջոցով:

**Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ (ԳՏՏԵ) բաղադրիչն** ուղղված է գյուղական համայնքներում ջրի հասանելիության բարելավման պահանջին՝ կենտրոնանալով յոթ՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի և Արագածոտնի մարզերի վրա: Բաղադրիչն աջակցում է ոռոգվող գյուղացիական տնտեսությունների զարգացման և խմելու ջրի մատակարարման ոլորտներում ներդրումներին: Ըստ այդմ, բաղադրիչը բաղկացած է ստորև նկարագրված երկու ենթաբաղադրիչներից.

- Ենթաբաղադրիչ 2.1. Համայնքային ջրամատակարարում (ՀՋ) ենթաբաղադրիչը ֆինանսավորում է բազմանպատակային, այդ թվում՝ մարդկանց կարիքների, ինչպես նաև անասունների ջրարբիացման և

տնամերձ հողամասերում այգեգործական արտադրության նպատակներին ծառայող ջրամատակարարման համակարգերի կառուցումը կամ վերականգնումը: ԳՏՁԵ-ՀՁ ներդրումները նպատակաուղղված են՝ բարելավելու ծառայությունների մակարդակը, ինչպես նաև անվտանգ ու մաքուր խմելու ջուր մատակարարելու աղքատ համայնքների, որտեղ մարդիկ օգտվում են ընդհանուր ծորակից կամ ունեն սահմանափակ ջրամատակարարում: Ենթաբաղադրիչն իրականացվում է ծրագրային հիմունքներով՝ հաստատված տարեկան աշխատանքային ծրագրերի հիման վրա:

Ենթաբաղադրիչ 2.2. Ոռոգման բաշխման փոքր և միջին համակարգեր (ՈԲՓՄՀ) ենթաբաղադրիչը ֆինանսավորում է ոռոգման ենթակառուցվածքների շինարարությունը կամ վերականգնումը՝ բարելավելով ջրի բաշխումը և բարձրացնելով փոքր սեփականատերերի ոռոգվող հողակտորների արտադրողականությունը, ինչպես նաև ընդլայնելով համակարգերի արդիականացման արդյունքում խնայված ջրի հաշվին ոռոգվող տարածքները:

#### **Առաջադրանքի նպատակ**

Մույն առաջադրանքի ընդհանուր նպատակն է նպաստել ծրագրի շրջանակաում վերակառուցված համակարգերի շահագործման և պահպանման արդյունավետության բարձրացմանը՝ նպաստելով ընդհանուր ԵԳՖԱ ծրագրի շրջանակում կատարված ներդրումների երկարաժամկետ կայունության ապահովմանը: Առաջադրանքի հատուկ նպատակն է զարգացնել ջրատնտեսական ենթակառուցվածքները շահագործող կառույցների տեխնիկական և ֆինանսական կառավարման կարողությունները՝ իրականացնելով կարողությունների և հմտությունների զարգացման և բարելավման միջոցառումներ՝ ուսուցումների կազմակերպման և նորարարական տեխնոլոգիաների պրակտիկ ցուցադրումների միջոցով:

#### **ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ**

Ուսուցումը պետք է կազմակերպվի ԵԳՖԱ ծրագրի շրջանակում բարելավված 29<sup>1</sup> ջրամատակարարման համակարգերը և 13<sup>2</sup> ոռոգման համակարգերը սպասարկող կառույցների տեխնիկական և ֆինանսահաշվային կազմի համար:

#### **Իրականացվելիք հիմնական առաջադրանքներ**

Խորհրդատուն պետք է մշակի և իրականացնի բարեկարգված համակարգի գործարկման մեջ անմիջականորեն ներգրավված աշխատակազմի կարողությունների զարգացման դասընթաց.

- յուրաքանչյուր շահառու համայնքում, որտեղ խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործումն պլանավորվում է իրականացնել համայնքային կառույցի միջոցով,
- յուրաքանչյուր ՋՕԸ-մ, որը սպասարկում է ծրագրի տարածքը:

Ուսուցման ծրագրի բովանդակությունը և դասընթացների վարման ձևաչափը պետք է բխի շահառու կառույցների կարիքներից: Ըստ այդմ, դասընթացների կազմակերպումը և վարումը պետք է իրականացվի երեք փուլով, այն է՝

- i) ուսուցման կարիքների բացահայտում;
- ii) ուսուցման մոդուլների և նյութերի մշակում;
- iii) ուսուցման անցկացում

Առաջադրանքի պլանավորման և իրականացման փուլում, Խորհրդատուն պետք է սերտ համագործակցի շահառու համայնքների ՏԻՄ-ի, Ջրպետկոմիտեի և ԾԻԳ-ի համապատասխան տեխնիկական մասնագետների հետ՝ ապահովելով առաջադրանքի մասնակցային իրականացումը

#### **Ներկայացման ենթակա հաշվետվություններ**

- Մեկնարկային զեկույց, որտեղ մանրամասն կներկայացվեն առաջադրանքի կազմակերպման և իրականացման ընդհանուր մոտեցումները, ներառյալ՝ առաջարկվող աշխատանքների ժամանակացույցը: Մեկնարկային հաշվետվությունը պետք է մանրամասնի արդյունքների գնահատման մեթոդաբանությունը:
- Կարիքների բացահայտման արդյունքների ամփոփ հաշվետվության նախագիծ՝ ներառյալ բոլոր հարցազրույցների արդյունքները, վերջնական տվյալների շտեմարանները և հետազոտության գործիքները, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումների ձայնագրությունները և դրանց վերծանումները:

<sup>1</sup> Այն համայնքների համար, որտեղ սպասարկումը հանձնված չէ ՎՋ-ին-տես Հավելված Ա

<sup>2</sup> Տես Հավելված Ա

- Ուսուցման մշակված մոդուլ, որում մանրամասն կներկայացվեն դասընթացների թեմաների նկարագրությունը, յուրաքանչյուր թեմայի դասավանդման տևողությունը ժամերով, յուրաքանչյուր թեմայի դասավանդողի անունն ազգանունը, տվյալ թեմայի դասընթացի օրերը;
- Ուսուցման նյութերը;
- Ֆոտո-հաշվետվություն-ալբոմ՝ յուրաքանչյուր համայնքի համար;
- Միջոցառման ընթացքի Ձայնագրություններ յուրաքանչյուր համայնքի համար;
- Միջոցառման GIS քարտեզավորում՝ ըստ համայնքի տեղակայման և ուսուցման վայրի տեղակայման;
- Վերջնական հաշվետվություն՝ անցկացված դասընթացների, մշակված և տրամադրված նյութերի, անցկացված քննության արդյունքների վերաբերյալ:

**Խորհրդատուին ներկայացվող պահանջներ**

- Աշխատանքային փորձ ջրատնտեսական ենթակառուցվածքների գործարկման համակարգի, դրա բարելավմանն ուղղված պետական և ծրագրային միջոցառումների ոլորտում
- Աշխատանքային փորձ ջրատնտեսական ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված կրթական միջոցառումների նախագծման, պլանավորման և իրականացման ոլորտում
- Վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ նմանատիպ աշխատանքային փորձ:

**Խորհրդատուի հիմնական անձնակազմի որակավորումն ու փորձը**

Փորձագետները պետք է առնվազն ունենան.

- Մագիստրոսի աստիճան հիդրոտեխնիկական ճարտարագիտության, ջրատնտեսական ենթակառուցվածքների արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսուցում մշակելու և իրականացնելու ապացուցված փորձ:
  - Տեղական ինքնակառավարման կազմակերպությունների և պետական գերատեսչությունների հետ արդյունավետ փոխգործակցության փորձ
  - Ուսուցման մոդուլների և նյութերի մշակման փորձ
  - Մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև GIS-ի կիրառման փորձ
  - Հայերեն և անգլերեն բանավոր և գրավոր հաղորդակցական լավ հմտություններ
  - Վերլուծական և հաշվետվություններ գրելու գերազանց հմտություններ:

**Ընտրության չափանիշները հետևյալն են.**

Չափանիշը	Բալերը
Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը) համապատասխան ոլորտում	10
Վերջին հինգ տարիների ընթացքում կնքված նմանատիպ պայմանագրերի քանակը	10
Հիմնական աշխատակազմի ընդհանուր փորձը և որակավորումը	20
Հիմնական աշխատակազմի ծրագրին առնչվող փորձը և որակավորումը	50
Լեզվի իմացությունը	10

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 4 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. <https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2020թ. մարտի 20-ը, ժ. 17.00:

**“Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ**

**Գնումների բաժնի պետ՝ Արթուր Գրիգորյան**  
**Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ:**

**Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 – 10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 – 58; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)**